

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 4

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2015 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դեկանի տարեկան հաշվետվության կապակցությամբ ամբիոնների տարեկան հաշվետվությունների քննարկում:
2. Հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
3. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա, ողջունելով գիտխորհրդի անդամներին, ասաց, որ այսօր գիտական խորհուրդն առաջին անգամ է նիստ հրավիրել *նոր կազմով*, և ինքն այդ առիթով շնորհավորում է բոլորին: Պրոֆ. Ավագյանն այնուհետև տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում են 23-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի 4-րդ նիստի օրակարգը:

1-ին հարցի առիթով արտահայտվեցին պրոֆ. պրոֆ. Ա. Աբաջյանը, Ն. Հարությունյանը, դոց. դոց. Վ. Պետրոսյանը, Ա. Ջրբաշյանը, Ա. Սարգսյանը և Ս. Գրիգորյանը:

Ելույթ ունեցող ամբիոնի վարիչները հայտնեցին, որ անցած ուսումնական տարվա ընթացքում իրենք արդեն հանդես են եկել իրենց տարեկան հաշվետվություններով, և դրանք այժմ, հաշվի առնելով հարաբերական վաղեմությունը, փոքր-ինչ թարմացվել են ու ներկայացվել խորհրդի նախագահին:

2-րդ հարցի՝ հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորման առիթով համապատասխան ամբիոնի յուրաքանչյուր ասպիրանտ կամ հայցորդ առանձին-առանձին ներկայացրեց հաշվետու ժամանակաշրջանում իր կատարած աշխատանքները, հանձնած մինիմում քննություններն ու տպագրած հոդվածները: Գիտխորհրդի անդամները նրանցից յուրաքանչյուրին տվեցին անհրաժեշտ հարցեր: Այ-

նուհետև ելույթ ունեցան ամբիոնների վարիչները, գիտական ղեկավարներից նրանք, ովքեր գիտխորհրդի անդամներ են, և ըստ այդմ էլ որոշվեց ատեստավորել հետևյալ ասպիրանտներին ու հայցորդներին.

հայոց լեզվի ամբիոն – Արսեն Վրույրի Վարդանյանին, Մայրանուշ Սուրենի Շահումյանին, Լիանա Վարդանի Ալեքսանյանին և Քնար Մաքսիմի Հարությունյանին.

հայոց լեզվի պատմության ամբիոն – Վանուհի Բաղմանյանին, Հասմիկ Սոսի Մարգսյանին և Անի Ասատրյանին.

ընդհանուր լեզվաբանության ամբիոն – Գայանե Դալլաքյանին, Արմինե Գևորգյանին, Աննա Ազրոյանին, Սիրարփի Կարապետյանին և Գոհար Հարությունյանին.

հայ նորագույն գրականության ամբիոն – Գոհար Հարությունյանին.

գրականության տեսության և գրաքննադատության ամբիոն – Ռուզաննա Ոսկանյանին, Գոհար Աքելյանին.

մանկավարժության ամբիոն – Աիդա Տիգրանյանին, Սուսաննա Խաչատրյանին, Ազնիվ Կարապետյանին և Անի Աբրահամյանին:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ Վալերի Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի ֆրանսերենի ամբիոնի ղոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Ժակլին Մինասյանի ղոկտորական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական խորհրդատուի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և ղոցենտ Գ. Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Բանասիրական գիտությունների թեկնածու, ղոցենտ Ժակլին Մինասյանի ղոկտորական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Ուսանողների միջմշակութային հաղորդակցական կարողությունների ձևավորման գիտամեթոդական հիմքերը (ժամանակակից ֆրանսերենի նյութի հիման վրա)» (ԺԳ. 00. 02):

2. Գիտական խորհրդատու նշանակել մանկ. գիտ. ղոկտոր, պրոֆ. Նազիկ Կարապետի Հարությունյանին:

բ/ ԼՍԵՑԻՆ - մանկավարժության ամբիոնի հայցորդ Անահիտ Խլոպուզյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը, դոցենտ Գ. Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. մանկավարժության ամբիոնի հայցորդ Անահիտ Խլոպուզյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումը հանրակրթական դպրոցում»:

2. Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանին:

գ/ ԼՍԵՑԻՆ - մանկավարժության ամբիոնի հայցորդ Վիկտորիա Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը, դոցենտ Գ. Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. մանկավարժության ամբիոնի հայցորդ Վիկտորիա Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինը մանկավարժ»:

2. Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանին:

դ/ ԼՍԵՑԻՆ – հայ գրականության ամբիոնի հայցորդ Թամար Բորիկի Անդրեասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Սաֆարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ռ. Էլոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. հայ գրականության ամբիոնի հայցորդ Թամար Բորիկի Անդրեասյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Լևոն Բաշալյանը 1880-ականների գրական շարժման համապատկերում»:

2. Գիտական ղեկավար նշանակել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Հմայակի Սաֆարյանին:

ե/ ԼՍԵՑԻՆ – հայ գրականության ամբիոնի ասպիրանտ, Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Սոսե Փարթուղի Բողոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Սաֆարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ռ. Էլոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. հայ գրականության ամբիոնի ասպիրանտ, Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Սոսե Փարթուղի Բողոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Նոր Ջուղայի գրական-մշակութային կյանքը 17-18-րդ դարերում»:

2. Գիտական ղեկավար նշանակել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Հմայակի Սաֆարյանին:

զ/ ԼՍԵՑԻՆ - Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Մարիամ Մոհհամադալի Թորաբիի ասպիրանտուրայում սովորելու համար երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը և դոց. Վ. Պետրոսյանը:

Նշվեց, որ Մարիամ Մոհհամադալի Թորաբիին սովորել է Սպահանի համալսարանում՝ հայ գրականություն մասնագիտությամբ, և ցանկություն է հայտնել ընդունվելու ասպիրանտուրա ժ. 02. 02 («Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն») մասնագիտությամբ: Ամբիոնը տվել է իր սկզբունքային համաձայնությունը՝ ընդառաջելու Մարիամ Մոհհամադալի Թորաբիի ցանկությանը, և միաժամանակ նշել, որ «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» (ժ. 02. 02) մասնագիտությամբ ասպիրանտուրա ընդունվելու դեպքում, եթե նրա հաստատվելիք թեման առնչվի պարսկերենին, անհրաժեշտ կլինի թեմայի ղեկավարին կցել իրանագետ խորհրդատու:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մարիամ Մոհհամադալի Թորաբիին երաշխավորել ընդհանուր լեզվաբանության ամբիոնում ասպիրանտուրա ընդունվելու համար:

ե/ ԼՍԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի հեռակա ասպիրանտ Քնար Մաքսիմի Հարությունյանի ատենախոսության թեմայի փոփոխության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը և դոց. Վ. Պետրոսյանը:

Նշվեց, որ Քնար Հարությունյանի թեման նախկինում եղել է <<Ալեքսանդր Բլուկի չափածոյի հայերեն թարգմանությունների լեզուն>>՝ „Հայոց լեզու,, ժ. 02. 01 մասնագիտությամբ: Սակայն, հաշվի առնելով նմանատիպ աշխատանքի առկայությունը, ինչպես նաև ասպիրանտի նախասիրությունները և ներկայիս աշխատանքի բնույթը և վայրը՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագրագիտություն, Քնար Մաքսիմի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման անհրաժեշտ է փոփոխության ենթարկել և հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ <<Գրաբարի դարձվածքների իմաստաբանական և կառուցվածքային ուսումնասիրություն /5-12դդ./>>՝ „Հայոց լեզու,, , ժ. 02. 01. մասնագիտությամբ, ղեկավար՝ պրոֆ. Ա. Աբաջյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. հայոց լեզվի ամբիոնի հայցորդ Քնար Մաքսիմի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Գրաբարի դարձվածքների իմաստաբանական և կառուցվածքային ուսումնասիրություն /5-12դդ./»՝ ժ. 02. 01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար նշանակել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աննա Հենրիկի Աբաջյանին:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին, և նիստը հայտարարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ